ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2021թ. № 118

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման կամ մերժման որոշումն ընդունում է համայնքի ղեկավարը, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի «ա» կետի համաձայն վարչական մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա վարույթի մասնակից է, և քանի որ ես՝ որպես Սպիտակ համայնքի ղեկավար, իրավունք չունեմ ընդունելու ինձ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող հողամասում (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2100284 վկայական) ինքնակամ կառուցված խանութի օրինականացման կամ մերժման որոշում՝ ***որոշում եմ.***

1. Հայտնել ինքնաբացարկ ինձ՝ Գագիկ Հենրիկի Սահակյանիս, սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող հողամասում (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2100284 վկայական) ինքնակամ կառուցված խանութի օրինականացման վարչական վարույթի շրջանակներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2021թ. № 119

ՌԱՖԻԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԸ, ԱՆԱՍՆԱԳՈՄԸ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԸ, ՄԱՌԱՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 8-րդ կետով և 13-կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Ռաֆիկ Սենիկի Այվազյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող, «ք.Սպիտակ, Մուրացան փողոց, թիվ 69» հասցեում գտնվող 06-006-0457-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,103 հեկտար մակերեսով հողամասի վրա 2015 թվականին ինքնակամ կառուցել է 35,84 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անասնագոմ, 7,52 քառակուսի մետր մակերեսով սանհանգույց, 13,87 քառակուսի մետր մակերեսով մառան և 3,63 քառակուսի մետր մակերեսով պարիսպ և 2020 թվականին ինքնակամ կառուցել է 111,01 քառակուսի մետր մակերեսով բնակելի տուն, 23,72 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբ և 2,58 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակ, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1065332 վկայականը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Ռաֆիկ Սենիկի Այվազյանի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ Ա-24/28 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ռաֆիկ Սենիկի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Մուրացան փողոց, թիվ 69 հասցեում գտնվող 06-006-0457-0002 կադաստրային

ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,103 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցված 35,84 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անասնագոմը, 7,52 քառակուսի մետր մակերեսով սանհանգույցը, 13,87 քառակուսի մետր մակերեսով մառանը, 3,63 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 111,01 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 23,72 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը և 2,58 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ռաֆիկ Սենիկի Այվազյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Ռաֆիկ Սենիկի Այվազյանին.

1) համայնքի բյուջե վճարել 215 009 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2021թ. № 120

ԱՐՄԵՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 17-րդ կետով և 18-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Արմեն Աշոտի Օհանյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 0,7 հեկտար մակերեսով հողամասի վրա 2020 թվականին ինքնակամ կառուցել է 239,06 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով արտադրամաս, 217,56 քառակուսի մետր մակերեսով վաճառասրահ, 14,52 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակ և 176,8 քառակուսի մետր մակերեսով պահեստ, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 2313996 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ -ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման

հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Արմեն Աշոտի Օհանյանի 2021 թվականի հունվարի 29-ի թիվ Օ-48/28 դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Արմեն Աշոտի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06-006-0444-0021 կադաստրային ծածկագրով 0,7 հեկտար մակերեսով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 239,06 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով արտադրամասը, 217,56 քառակուսի մետր մակերեսով վաճառասրահը, 14,52 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը և 176,8 քառակուսի մետր մակերեսով պահեստը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Արմեն Աշոտի Օհանյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, թիվ 161» հասցեն:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Արմեն Աշոտի Օհանյանին.

1) համայնքի բյուջե վճարել 1 033 742 ՀՀ դրամ (որից՝ 444 792 ՀՀ դրամը վաճառասրահի և աստիճանահարթակի համար, 588 950 ՀՀ դրամը արտադրամասերի և պահեստի համար) օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2021թ. № 121

ՀԱՄԼԵՏ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՀԱՐԹԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 8-րդ կետով և 13-կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Համլետ Ռաֆիկի Շահբազյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «ք.Սպիտակ, Խնկոյան փողոց, թիվ 77» հասցեում գտնվող 06-006-0490-0040 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,09803 հեկտար մակերեսով հողամասի վրա 2015 թվականին ինքնակամ կառուցել է 7,38 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկուղ, 124,18 քառակուսի մետր մակերեսով բնակելի տուն, 27,49 քառակուսի մետր մակերեսով հարթակ և 11,73 քառակուսի մետր մակերեսով պարիսպ, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1131467 վկայականը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Համլետ Ռաֆիկի Շահբազյանի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ Շ-25/28 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համլետ Ռաֆիկի Շահբազյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Խնկոյան փողոց, թիվ 77 հասցեում գտնվող 06-006-0490-0040 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,09803 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցված 7,38 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկուղը, 124,18

քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 27,49 քառակուսի մետր մակերեսով հարթակը և 11,73 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Համլետ Ռաֆիկի Շահբազյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Համլետ Ռաֆիկի Շահբազյանին.

1) համայնքի բյուջե վճարել 177 780 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2021թ. № 122

ԼԻՊԱՐԻՏ ԴԱՐՉԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, , «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 8-րդ կետով և 13-կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Լիպարիտ Թորգոմի Դարչինյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «ք.Սպիտակ, Առափնյա փողոց, թիվ 83» հասցեում գտնվող 06-006-0035-0014 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,05344 հեկտար մակերեսով հողամասի վրա 2020 թվականին ինքնակամ կառուցել է 169,63 քառակուսի մետր մակերեսով մառան, 54,54 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակ և 0,51 քառակուսի մետր մակերեսով պարիսպ, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 2779854 վկայականը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Լիպարիտ Թորգոմի Դարչինյանի 2021 թվականի հունվարի 29-ի թիվ Դ-47/28 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Լիպարիտ Թորգոմի Դարչինյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Առափնյա փողոց, թիվ 83 հասցեում գտնվող

բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,05344 հեկտար մակերեսով:

2. Լիպարիտ Թորգոմի Դարչինյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «ք.Սպիտակ, Առափնյա փողոց, թիվ 83» հասցեում գտնվող 06-006-0035-0014 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,05344 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցված 169,63 քառակուսի մետր մակերեսով մառանը, 54,54 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը և 0,51 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Լիպարիտ Թորգոմի Դարչինյանի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Լիպարիտ Թորգոմի Դարչինյանին.

1) համայնքի բյուջե վճարել 216 441 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2021թ. № 123

ԳԱԳԻԿ ՀԵՆՐԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 16-րդ կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով, 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Գագիկ Հենրիկի Սահակյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Շահումյան փողոց վրա գտնվող 06-006-0499-0021 և 06-006-0499-0042 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության 0,0078 հեկտար ընդհանուր մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա նկուղին կից 2006 թվականին ինքնակամ կառուցել է 31,44 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով նկուղ և 28,94 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով խանութ, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի թիվ գրանցման թիվ 2100284 և թիվ 2319972 վկայականները, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի

չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Գագիկ Հենրիկի Սահակյանի 2021 թվականի հունվարի 25-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Գագիկ Հենրիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0499-0021 և 06-006-0499-0042 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի միավորման արդյունքում առաջացած 0,0078 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,0078 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 31,44 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով նկուղը և 28,94 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով խանութը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Գագիկ Հենրիկի Սահակյանի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 250» հասցեն:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

6. Գագիկ Հենրիկի Սահակյանին.

1) համայնքի բյուջե վճարել 137 394 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք.Սպիտակ